ԲԱՂՄԱՎԷՊ

Զ. ՏԱՐԻ. ԹԻՒ 11. 1848 ՅՈՒՆԻՍԻ 1.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ռոֆայէլեան Վարժարանին աշակերտաց Երկրորդ դասուն 'ի հայրենիս դառնալը։

Ազն անպատմելի ուրախութիւնն որ այնչափ ծնողք ու ազգականք և Հն

կենաց, որ թէ իրենց և թէ իրենց ընտանեացն ու ազգին երջանկութեան պատճառ ըլլան ։ Աս էր անմահ յիշատակաց արժանի Բարերարին փափաքը . աս փափաքմանց կատարմանը համար անխնայ եղած է մեր ջանքը, և հիմա ուրախութեամբ կը տեսնենք որ այս փութաջան և ընտիր աշակերտաց խումբըն ալ կը պսակէ մեր աշխատութիւնն ու կը մոռցընէ, և միանգամայն նոր աշխատութիւններու նորէն ձեռք զարնել կը յորդորէ ։

ՅԵՏԻՆ ԽՕՍՔ

ԱՌ ԱՒԱՐՏԱՎԱՐԺ ՀԱՄԲԱԿՍ ՌԱՖԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

ՅՈՒՂԱՐԿԵԼՈՎ ԶՆՈՍԱ Ի ՀԱՅՐԵՆԻՍ

Եւ իցե՞ն ստուգիւ այս բաբախմունք սրտի և շրթանց, որ կանխեն յիս քան զբարբառ, նշանք՝ եթէ յետին են ինձ բանք այսօր առ դաս մի աշակերտաց Ռափայէլեան վարժարանիս և իմ իսկ՝ ժամանելոց յաւարտ վարժիցն . արդարև ստո՞յգ հասեալ կայցեմք յելս բազմայեղանակ ասպարիզիս ։ Անցե՞ն գնացին, սպառեցա՞ն ուրեմն սուղ ինչ պակաս եօթն ամք՝ յորմէ հետէ պարապէին սոքա յուսմունս համապազօր առաջի աչաց մերոց . և աւարտեցա՞ւ ժամանակն դաստիարակութեան, ժամանակ՝ քան զոր չիք մեծ 'ի շահ, և դժուարին 'ի համար ։ Այսպէս ուրեմն և դո՛ւք, ջանասէր մանկունք, որք առաւել քան թէ զերրորդ մասն կենաց ձերոց ծախեցէք յօտար երկրիս յայսմիկ, հազարս ասպարիզաց հեռի 'ի քաղցր դիմաց ընտանեաց, զօրէն ճգնազգեցիկն մանկանց ոքնեալք յուսման առ ոտս նորոց ումանց և եկամուտ ձեզ ծնողաց, մերթ հեծելով և մերթ հրճուելով, և դո՛ւք արդ թողեալ մեկնիք 'ի դիւրալուր ձեզ ժողովոյս, 'ի խնամոտ հոգաբարձուացդ և 'ի վաստակաւոր ուսուցչաց, և հեռանայք գնայք ծածկիք ուր սիրտք և պարտք կոչենն զձեզ . և այսպէս անահք և յանդգունք 'ի համաշխարհական ծուփս ժամանակիս, խլրտելոց ազանց և պետութեանց, դիմադրաւեալք ընդ արհաւիրս ահեղաբամբիւն երկաթացան հրաձգութեանց, և ընդ կասկածաւոր ալիս, զոր առաւել քան զմրրիկս օդոց՝ հետազօտութիւնք վրդովեն նախանձընդդէմ իշխանականաց ։ Յայսպիսում ժամանակի սլանա՞յք դուք 'ի հայրենիս ։

Այժ . տեսանեմ զնոյն ինքն զհայրենիս հրաւէր ձեզ արկեալ յիւր օժանդակ . տեսանեմ զձեզ պատրաստ և յօժարս առ ձայն նորա . տեսանեմ և զարգոյ ատեանս՝ հաւան երկոցունց կամաց ։ Այժ, հասին հասին և մեզ ժամք բաժանարարք և խօսք յետինք . ամք ամփոփեցան 'ի վայրկեանս, և ժամանակն ահա թռանի ձեօք հանդերձ, և ես զրկաձիգ՝ փարիմ զունայնութեամբ ։ Ո՛վ անդարձական օրինաց ժամանակի ։ Տուք արդ ուրեմն հրաման տառապելոյս, ո՛վ աստուածապատիւ Տէր, պարք վարդապետաց և ժողով իմաստասէր, հրաման տուք ինձ թարգման կալ ըղձից և հաճութեան ձերոյ և զայս ևս նուագ՝ թերևս յետին, և քան զբնաւս դժուարին 'ի գիւտ բանից և 'ի բացատրութիւն իմոցս իսկ յուզելոց կրից . վասն որոյ և ոչ իսկ զներողամտութիւն քաջակորով ունկնդրացդ ժտել համարձակիմ, ուր անձամբ յանձնէս զպարտութիւն խոստովանիմ ։

Ահա տուան ձեզ հրամանք, մանկունք վարժից, դառնալոյ 'ի հայրենիսդ . արձակեալ էք յուսմանց և յուսումնարանէս . ո՛հ, երթայք ուրախութեամբ և տրտմութեամբ, որով կրիւք արձակէ զձեզ ժողովս այս և ձայնս այս ։ Երթա՛յք, զծանր տուեալ զողջոյն հրաժեշտին առ բազմերախտ ժողովս, որոյ առաջի մանկութիւն ձեր զարգացաւ, և ոյժ ձեր կշռեցաւ . երթա՛յք,